Հավելված N1
Հայաստանի Հանրապետության
պետական եկամուտների կոմիտեի նախագահի
2020 թվականի ապրիլի 17-ի
N 337-Ն հրամանի

Ձև

ՀԻՄՆԱԴՐԱՄՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՀՐԱՊԱՐԱԿՎՈՂ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ
ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
Հիմնադրամի հոգաբարձուների
խորհրդի 29-06-2024 թ. որոշմամբ
««ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆ-ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՀԻՄՆԱԴՐԱՄ»
Հ Ա Շ Վ Ե Տ Վ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն
հիմնադրամի 2023 թ. գործունեության մասին

1. Հիմնադրամի՝		
1.1 Լրիվ անվանումը		«ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆ-ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՀԻՄՆԱԴՐԱՄ
1.2 Գտնվելու վայրը		ԵՐԵՎԱՆ ԱՐԱԲԿԻՐ ԱՐԱԲԿԻՐ ԹԱՂԱՄԱՍ ԾԻԾԵՌՆԱԿԱԲԵՐԴԻ ԽՃՈՒՂԻ 8/8
1.3 Պետական գրանցման համարը		222.160.1010096
1.4 Պետական գրանցման տարին, ամիսը, ամսաթիվը		2002-12-13
1.5 ՀՎՀՀ-ն		00007386
1.6 Հեռախոսը (այդ թվում՝ բջջային)		+(374)91180504
1.7 Պաշտոնական ինտերնետային կայքը		http://www.genocide-museum.am/
1.8 Էլեկտրոնային փոստը		info@genocide-museum.am
2. Հիմնադրի անուն, ազգանուն կամ անվանում՝		
3. Հոգաբարձուների խորհրդի անդամների անուն, ազգանուն՝		
4. Կառավարչի անուն, ազգանուն՝		
Հարություն Մարության		
5. Աշխատակազմում ընդգրկված անձանց քանակը	87	
6. Անձեռնմխելի կապիտալի չափը		
7. Անձեռնմխելի կապիտալի կառավարումից ստացված եկամուտ		
8. Ֆինանսավորման աղբյուրները՝		
8.1 Ֆինանսավորումն ըստ խմբերի	8.2 Ստացված ֆինանսական միջոցների նպատակը	8.3 Չափը
8.1.1 Պետական և համայնքային բյուջեներից դրամական մուտքեր		
	Հայկական հարցի և Հայոց ցեղասպանության թեմայի ուսումնասիրություն և տարածում	263,718,700
	Երեխաներն ու ազգը գիտական կոնֆերանս	1,050,000
	Համակենտրոնացման ճամբարները հայոց ցեղասպանության տարիներին	800,000
	Գիտական աստիճանների հավելավճարներ	3,675,000
	Ասպիրանտական նպաստ	1,137,500

	Կադրերի պատրաստում	310,800
	Տեսահսկման համակարգի ձեռքբերում	10,800,000
	Գիտական սարքերի ձեռքբերում	8,125,000
8.1.2 Իրավաբանական անձանցից դրամական մուտքեր		
	Կրթական ծրագրերի կազմակերպում	2,034,069
	Երեխաներն ու ազգը գիտական կոնֆերանս	6,824,115
	Համակենտրոնացման ճամբարները հայոց ցեղասպանության տարիներին	1,530,000
	Բենզինի ձեռքբերում	250,000
	Ավրորա գրքի ռուսերեն թարգմանություն և տպագրություն	2,023,950
8.1.3 Ֆիզիկական անձանցից դրամական մուտքեր		
	Գրքի տպագրություն	579,150
	Հիմնադրամի գործառնական ծախսեր	31,703,720
9. Հիմնադրի ներդրումը՝		
9.1 Դրամական միջոցներ		
9.2 Գույք	9.2.1 Տեսակը	9.2.2 Արժեքը
10. Նվիրատվությունները/ նվիրաբերությունները		
10.1 Նվիրատուները/նվիրաբերողներն ըստ խմբերի՝	10.2 Նվիրված/նվիրաբերված գույք	
	10.2.1 Տեսակը	10.2.2 Արժեքը
10.1.1 Հայաստանի Հանրապետություն/համայնքներ		
10.1.2 Իրավաբանական անձինք		
10.1.3 Ֆիզիկական անձինք		
	0	0
11. Իրականացված ծրագրերը՝		
11.1 Ծրագրի անվանումը	11.2 Ծախսված գումարը	
Գիտական և գիտատեխնիկական գործունեության ազգային արժեք ներկայացնող գիտական օբյեկտի պահպանում	224,218,700	
Գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային/թեմատիկ/ հետազոտություն	39,864,842	
Հայոց ցեղասպանության թեմայի ուսուցում» V ամառային դպրոց ուսուցիչների համար	4,260,001	
Երեխաներն ու ազգը գիտական կոնֆերանս	7,874,115	
Համակենտրոնացման ճամբարները հայոց ցեղասպանության տարիներին	2,330,000	
Գրքերի թարգմանություն ևտպագրություն	2,603,100	
Հայոց Ցեղասպանության թանգարան- ինստիտուտի պահպանում	31,953,720	

Digitally signed by GHARAGYOZYAN SATENIK 5809870120
Date: 2024.08.12 14:53:11 AMT

Ասպիրանտական կադրերի պատրաստում և նպաստի տրամադրում	1,448,300
Գիտական աստիճանների հավելավճարների տրամադրում	3,675,000
Գերեզմանի բարեկարգում	10,065,950
12. Ֆինանսական տարում օգտագործված միջոցների ընդհանուր չափը	328,293,728
13. Կանոնադրական նպատակների իրականացմանն ուղղված ծախսերի չափը	328,293,728

Նշումներ՝

Ֆինանսական հաշվետվություններն ու ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ աուդիտն իրականացնող անձի (աուդիտորի) եզրակացությունը՝ ____25____ էջերից:
էջերի քանակը

Հիմնադրամի տնօրեն _____
ստորագրությունը, անունը, ազգանունը

Գլխավոր հաշվապահ _____
ստորագրությունը, անունը, ազգանունը

Ֆինանսական հաշվետվություններ
Անկախ աուդիտորական եզրակացություն

2023թ դեկտեմբերի 31-ի դրությամբ

«ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆ-ԻՆՍՏԻՏՈՒՏ» Հիմնադրամ

Երևան – 2024

«Հայոց ցեղասպանության թանգարան-
ինստիտուտ» հիմնադրամ
Հայաստանի Հանրապետություն

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԲԱԺԻՆ	էջ
Անկախ աուդիտորական եզրակացություն	3
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն	6
Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն	7
Զուտ ակտիվների փոփոխությունների մասին հաշվետվություն	8
Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն	9
Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ	10

«Ջի ընդ Քո Աուդիտ Գրուպ» ՍՊԸ
ՀՀ, ք. Երևան 0038, Հալաբյան 5/6
5/6 Halabyan str., Yerevan 0038, RA
Հեռ/Tel: (+374 10) 399-855

ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ»
Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդին

Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել «Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ» հիմնադրամի (այսուհետ՝ «Հիմնադրամ») ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը՝ առ 31 դեկտեմբերի 2023թ., ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա համապարփակ ֆինանսական արդյունքի, զուտ ակտիվների փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ՝ հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականության ամփոփ նկարագիրը:

Մեր կարծիքով, կից ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում Հիմնադրամի ֆինանսական վիճակը 2023 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտվող տարվա ֆինանսական արդյունքը և դրամական միջոցների հոսքերը՝ համաձայն Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ):

Կարծիքի հիմք

Աուդիտն անցկացրել ենք Աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է այս եզրակացության «Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար» բաժնում: Մենք անկախ ենք Հիմնադրամից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակած Պրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի կանոնագրքի (ՀԷՄՍԽ կանոնագիրք) և պահպանել ենք էթիկայի այլ պահանջները՝ համաձայն ՀՄԷՍԽ կանոնների: Համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավարար համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

Ղեկավարության և կառավարման օղակներում գտնվող անձանց պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՍ-ների համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման, և այնպիսի ներքին հսկողության համար, որն ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը ապահովելու համար:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս՝ ղեկավարությունը պատասխանատու է Հիմնադրամի անընդհատ գործելու կարողության գնահատման համար՝ անհրաժեշտության դեպքում բացահայտելով անընդհատությանը վերաբերող հարցերը, ինչպես նաև հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքը կիրառելու համար, եթե ղեկավարությունը չունի Հիմնադրամը լուծարելու կամ Հիմնադրամի գործունեությունը դադարեցնելու մտադրություն, կամ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Կառավարման օղակներում գտնվող անձինք պատասխանատու են Հիմնադրամի ֆինանսական հաշվետվողականության գործընթացի վերահսկման համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով զերծ են էական խեղաթյուրումներից, անկախ դրանց խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորի եզրակացություն:

Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ սխալի կամ խարդախության արդյունքում, և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք, առանձին կամ միասին վերցրած, կազդեն ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների՝ այդ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

ԱՄՍ-ների համաձայն իրականացրած աուդիտի ողջ ընթացքում կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական կասկածամտություն: Ի լրումն՝

- հատկորոշում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության համակարգի չարաշահում.
- ձեռք ենք բերում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին պատկերացում՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, և ոչ թե Հիմնադրամի ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար.
- գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և կից բացահայտումների խելամտությունը.
- եզրահանգում ենք ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ, և հիմնվելով ձեռք

բերված աուդիտորական ապացույցների վրա՝ գնահատում ենք՝ արդյոք առկա է էական անորոշություն դեպքերի կամ իրավիճակների վերաբերյալ, որոնք կարող են նշանակալի կասկած հարուցել Հիմնադրամի անընդհատ գործելու կարողության վրա: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզանից պահանջվում է աուդիտորի եզրակացությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդպիսի բացահայտումները բավարար չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Սակայն, ապագա դեպքերը կամ իրավիճակները կարող են ստիպել Հիմնադրամին դադարեցնել անընդհատության հիմունքի կիրառումը.

- գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ՝ բացահայտումները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների ու դեպքերի ճշմարիտ ներկայացումը:

Կառավարման օղակներում գտնվող անձանց, ի թիվս այլ հարցերի, հաղորդակցում ենք աուդիտի առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ՝ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

Հաստատված է
«Զի ընդ Քո. Աուդիտ Գրուպ» ՍՊԸ

Տնօրեն Լ.Պողոսյան

Աուդիտոր Ա.Չատինյան

«14» հունիսի 2024թ.
Երևան

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն

«Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ» հիմնադրամ
2023թ.դեկտեմբերի 31-ի դրությամբ

ԱԿՏԻՎՆԵՐ	Ծանոթագրություններ	31/12/2023 Դրամ 000	31/12/2022 Դրամ 000
Ոչ ընթացիկ ակտիվներ			
Հիմնական միջոցներ	4	131,562,089	131,645,455
Ոչ նյութական ակտիվներ	5	5,279	107
Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ		**131,567,368**	**131,645,562**
Ընթացիկ ակտիվներ			
Պաշարներ	6	31,192	30,882
Առնտրային և այլ դեբիտորական պարտքեր		931	2,113
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	7	68,116	60,046
Ընդամենը ընթացիկ ակտիվներ		**100,239**	**93,041**
Ընդամենը ակտիվներ		**131,667,607**	**131,738,603**
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԶՈՒՏ ԱԿՏԻՎՆԵՐ			
Զուտ ակտիվներ			
Կուտակված հավելաճ		37,796	32,429
Ընդամենը զուտ ակտիվներ		**37,796**	**32,429**
Ոչ ընթացիկ պարտավորություններ			
Ակտիվներին վերաբերող շնորհներ	8	131,576,248	131,642,814
Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ		**131,576,248**	**131,642,814**
Ընթացիկ պարտավորություններ			
Առնտրային և այլ կրեդիտորական պարտքեր	9	20,140	10,596
Եկամուտներին վերաբերվող շնորհներ	10	25,534	44,019
Պահուստներ	11	7,889	8,745
Ընդամենը ընթացիկ պարտավորություններ		**53,563**	**63,360**
Ընդամենը պարտավորություններ և զուտ ակտիվներ		**131,667,607**	**131,738,603**

10-ից 25-րդ էջերում ներկայացված ծանոթագրությունները կազմում են սույն ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը:

Տնօրեն
Արտիտ Գզոյան

Գլխավոր հաշվապահ
Սաթենիկ Ղարագյոզյան

Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն

«Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ» հիմնադրամ

2023թ դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

	Ծանոթագրություններ	2023 դրամ 000	2022 դրամ 000
Եկամուտ ճանաչված շնորհներ	12	386,496	326,545
Հասույթ	13	42,218	27,389
Այլ եկամուտներ		736	132
Ընդամենը եկամուտներ		**429,450**	**354,066**
Աշխատակիցների հատուցումների գծով ծախսեր	14	(260,507)	(212,439)
Մաշվածության և ամորտիզացիայի ծախսեր		(85,676)	(84,407)
Գրասենյակային և կոմունալ ծախսեր		(27,471)	(21,258)
Վաճառված ապրանքների ինքնարժեք		(14,096)	(10,645)
Գործուղման և ներկայացուցչական ծախսեր		(10,503)	(4,345)
Այցիների բարեկարգման և խնամքի ծախսեր		(6,103)	(5,224)
Հեռահաղորդակցության ծախսեր		(1,068)	(847)
Հիմնական միջոցների նորոգման, սպասարկման ծախսեր		(778)	(82)
Այլ ծախսեր	15	(17,880)	(9,220)
Ընդամենը ծախսեր		**(424,082)**	**(348,467)**
Տարվա արդյունք մինչև հարկումը		**5,367**	**5,600**
Շահութահարկի գծով ծախս (փոխհատուցում)		-	-
Տարվա արդյունք հարկումից հետո		**5,367**	**5,600**
Այլ համապարփակ ֆինանասական արդյունք			
Տարվա ընդհանուր համապարփակ ֆինանսական արդյունք		**5,367**	**5,600**

10-ից 25-րդ էջերում ներկայացված ծանոթագրությունները կազմում են սույն ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը:

Տնօրեն
Էդիտա Գրիգոյան

Գլխավոր հաշվապահ
Սաթենիկ Ղարագյոզյան

Զուտ ակտիվների փոփոխությունների մասին հաշվետվություն

«Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ» հիմնադրամ

2023թ դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

դ 000

	Կուտակված հավելաճ	Ընդամենը
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2021թ.	**26,829**	**26,829**
Տարվա հավելաճ	5,600	5,600
	-	
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2022թ.	**32,429**	**32,429**
Տարվա հավելաճ	5,367	5,367
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2023թ.	**37,796**	**37,796**

10-ից 25-րդ էջերում ներկայացված ծանոթագրությունները կազմում են սույն ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը:

Տնօրեն
Լիտա Գրոյան

Գլխավոր հաշվապահ
Սաթենիկ Ղարագյոզյան

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն

«Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ» հիմնադրամ

2023թ դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

	01.01.2023-31.12.2023	01.01.2022-31.12.2022
	դ 000	դ 000
Դրամական միջոցների հոսքեր գործառնական գործունեությունից		
Որպես շնորհ ստացված դրամական միջոցներ	305,988	282,638
Հաճախորդներից ստացված դրամական միջոցներ	46,488	31,175
Վճարումներ ապրանքների և ծառայությունների դիմաց	(67,168)	(52,773)
Վճարումներ աշխատակիցներին	(186,480)	(157,862)
Վճարումներ բաղիրավական պայմանագրերի գծով	(10,103)	(1,303)
Վճարումներ հարկերի և այլ պարտադիր վճարների գծով	(67,135)	(58,249)
Ստացված շնորհի վերադարձ	(4,600)	(1,879)
Այլ մուտքեր	-	40
Այլ ելքեր	(7,434)	(936)
Գործառնական գործունեությունից ստացված / գործունեության համար օգտագործված զուտ դրամական միջոցներ	**9,556**	**40,851**
Դրամական միջոցների հոսքեր ներդրումային գործունեությունից		
Ոչ ընթացիկ ակտիվների ձեռք բերում	(1,321)	(993)
Ներդրումային գործունեությունից ստացված / գործունեության համար օգտագործված զուտ դրամական միջոցներ	**(1,321)**	**(993)**
Դրամական միջոցների հոսքեր ֆինանսական գործունեությունից		
Ստացված վարկեր և փոխառություններ	-	-
Ֆինանսական գործունեությունից ստացված / գործունեության համար օգտագործված զուտ դրամական միջոցներ	-	-
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ աճ/նվազում	**8,235**	**39,857**
Արտաժույթի փոխարժեքային տարբերություններ	**(165)**	**(847)**
Դրամական միջոցները և դրանց համարժեքները ժամանակաշրջանի սկզբի դրությամբ	**60,046**	**21,035**
Դրամական միջոցները և դրանց համարժեքները ժամանակաշրջանի վերջի դրությամբ	**68,116**	**60,046**

10-ից 25-րդ էջերում ներկայացված ծանոթագրությունները կազմում են սույն ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը:

Տնօրեն
Էդիտա Գզոյան

Գլխավոր հաշվապահ
Սաթենիկ Ղարագյոզյան

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

«Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ» հիմնադրամ

2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ և նույն ամսաթվին ավարտված տարվա համար, հազար դրամով

1. Հիմնադրամի գործունեության բնույթը

«Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ» Հիմնադրամը (այսուհետ՝ Հիմնադրամ) քաղաքացիների կամավոր գույքային վճարների հիման վրա ստեղծված և անդամություն չունեցող ոչ առևտրային կազմակերպություն է: Հիմնադրամը հանդիսանում է «Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ» ՊՈԱԿ-ի իրավահաջորդը, վերագրանցվել է Հայաստանի Հանրապետության կառավարության 21 դեկտեմբերի 2017թ. Թիվ 1696-Ն որոշումով: Հիմնադրամի պետական գրանցման համարն է 222.160.1010096, ՀՎՀՀ-ն՝ 00007386:

Հիմնադրամը գործում է Հայաստանի Հանրապետության ողջ տարածքում և չունի մասնաճյուղեր:

Հիմնադրամի աշխատակիցների միջին թվաքանակը 2023թ-ին կազմել է 84 անձ, 2022թ-ին՝ 79:

Հիմնադրամի գտնվելու և գործունեության վայրն է ՀՀ, ք. Երևան, Ծիծեռնակաբերդի 8/8:

Հիմնադրամի կանոնադրական նպատակներն են՝

- Հայկական հարցի, Հայոց ցեղասպանության, ցեղասպանագիտության և հայագիտության բնագավառներում հիմնարար ծրագրերի, գիտական և գիտատեխնիկական հետազոտությունների իրականացումը, դրանց արդյունքում ստեղծված գիտելիքների տարածումն ու քարոզչությունը, ինչպես հրատարակչական, այնպես էլ հայրենական և միջազգային տարբեր գիտատեղեկատվական ռեսուրսների օգնությամբ,
- հայերեն և օտարալեզու աղբյուրների, արխիվային վավերագրերի, հայագիտական գրականության ու մամուլի ձեռք բերումը, պահպանումը, և հետազոտումը՝ թվային և ժամանակակից այլ հնարավոր ձևաչափով ու տեսքով,
- Թանգարանային նմուշների պահպանումը, վերականգնումը, սպասարկումը, այդ թվում դրանց՝ գիտահետազոտական համակարգերում ժամանակակից տեխնոլոգիաների ներդրումը և կիրառումը, տեղեկատվական համակարգի զարգացման ապահովումը,
- մշտական և ժամանակավոր ցուցադրությունների պատրաստումն ու սպասարկումը,
- գիտական կադրերի պատրաստումը, գիտական միջոցառումների անցկացումը:

Հիմնադրամը իրավունք ունի անձամբ զբաղվելու իր կանոնադրությամբ սահմանված ձեռնարկատիրական գործունեության տեսակներով միայն այն դեպքում, երբ դա ծառայում է այն նպատակների իրականացմանը, որոնց համար նա ստեղծվել է և համապատասխանում է այդ նպատակներին:

Հիմնադրամի բարձրագույն կառավարման մարմինը հոգաբարձուների խորհուրդն է, որի լիազորությունների ժամկետը չի սահմանափակվում: Հիմնադրամի հոգաբարձուների խորհուրդը կազմված է 15 անդամից: Խորհրդի կազմը հաստատվում է Հայաստանի Հանրապետության վարչապետի որոշմամբ:

Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի կազմը հետևյալն է.

Արայիկ Հարությունյան	ՀՀ վարչապետի աշխատակազմի ղեկավար
Զարեհ Սինանյան	Սփյուռքի գործերի գլխավոր հանձնակատար
Վլադիմիր Վարդանյան	Ազգային ժողովի պատգամավոր (համաձայնությամբ)
Անուշավան եպիսկոպոս Ժամկոչյան	Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի ներկայացուցիչ (համաձայնությամբ)
Գերաշնորհ Տ. Շահան Արքեպիսկոպոս Սարգիսեան	Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսության ներկայացուցիչ (համաձայնությամբ)
Հարություն Մարության	ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի գլխավոր գիտաշխատող (համաձայնությամբ)
Եղիշե Կիրակոսյան	ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի եվրոպական և միջազգային իրավունքի ամբիոնի դասախոս (համաձայնությամբ)
Հովհաննես Հովհաննիսյան	ԵՊՀ ռեկտոր (համաձայնությամբ)
Հրանուշ Խառատյան	ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի գիտաշխատող (համաձայնությամբ)
Ստեփան Աստուրյան	Հայաստանի ամերիկյան համալսարանի Քաղաքականության վերլուծության Թուրփանջյան կենտրոնի ղեկավար (համաձայնությամբ)
Ռայմոնդ Գևորգյան	Ֆրանսիահայ պատմաբան, ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի արտասահմանյան անդամ (համաձայնությամբ)
Արթուր Մարտիրոսյան	ՀՀ ԿԳՄՄՆ նախարարի տեղակալ
Անի Ավագյան	«Հայկական Ժառանգություն» զարգացման հիմնադրամի գործադիր տնօրեն (համաձայնությամբ)
Սարգիս Հայոցյան	- ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության գիտության կոմիտեի նախագահ
Վազգեն Յակուբյան	- ՀԲԸՄ-ի Հայաստանի նախագահ (համաձայնությամբ)

2. Պատրաստման հիմքերը

2.1 Համապատասխանությունը

Հաշվապահական հաշվառումը վարվել է Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին համապատասխան: Ֆինանսական հաշվետվությունները կազմվել են համաձայն ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ):

Ներկայումս ՖՀՄՍ-ն չի պարունակում հաշվապահական հաշվառման վարման և ֆինանսական հաշվետվությունների ներկայացման վերաբերյալ հատուկ ուղեցույցներ շահույթ չհետապնդող և ոչ կառավարական կազմակերպությունների համար: Եթե ՖՀՄՍ-ն չի տալիս ուղղություն շահույթ չհետապնդող ոլորտի կազմակերպություններին հատուկ գործարքների հաշվառման վերաբերյալ, ապա հաշվապահական հաշվառման համակարգը պետք է հիմնվի ՖՀՄՍ ընդհանուր սկզբունքների հիման վրա՝ համաձայն Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՍԽ) «Ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ներկայացման հայեցակարգային հիմունքների»

2.2. Չափման հիմքը

Ակտիվներն ու պարտավորությունները ներկայացված են սկզբնական (պատմական) կամ ամորտիզացվող արժեքով:

2.3. Չափման և ներկայացման արժույթը

Հիմնադրամի համար որպես չափման և ֆինանսական հաշվետվությունների ներկայացման արժույթ ընդունվել է ազգային արժույթը՝ ՀՀ դրամ (դրամ): Ֆինանսական տեղեկատվությունը ներկայացված է հազար դրամներով՝ առանց ստորակետից հետո տասնորդական նիշի:

2.4. Անընդհատությունը

Ներկայացվող ֆինանսական հաշվետվությունները կազմվել են ելնելով անընդհատության հիմունքից, որը ենթադրում է ակտիվների իրացում և պարտավորությունների մարում բնականոն գործունեության ընթացքում:

2.5. Համադրելիությունը և ֆինանսական հաշվետվությունների վերաներկայացումը

Ընթացիկ ֆինանսական տարվա տվյալները համեմատելի են նախորդ ժամանակաշրջանի համար ներկայացված տվյալների հետ:

Հիմնադրամը ուղղում է նախորդող ժամանակաշրջանի էական սխալները հետընթաց (բացառությամբ, երբ անիրագործելի է կոնկրետ ժամանակաշրջանի վրա սխալի հետևանքների կամ դրա կուտակային հետևանքների որոշումը) դրանց հայտնաբերումից հետո հրապարակման համար հաստատված առաջին ֆինանսական հաշվետվությունների փաթեթում՝

ա) վերահաշվարկելով ներկայացված այն նախորդող ժամանակաշրջանի (ժամանակաշրջանների) համեմատելի գումարները, որոնցում տեղի է ունեցել սխալը, կամ

բ) վերահաշվարկելով ակտիվների, պարտավորությունների և սեփական կապիտալի սկզբնական մնացորդները ներկայացված նախորդ ամենավաղ ժամանակաշրջանի համար, եթե սխալը տեղի է ունեցել մինչև ներկայացված ամենավաղ ժամանակաշրջանը:

3. Հիմնադրամի հաշվապահական հաշվառման քաղաքականության և գնահատումների համառոտ ամփոփում

3.1. Ֆինանսական ակտիվներ

Ֆինանսական ակտիվները դասակարգվում են ստորև նշված կատեգորիաներում՝ ըստ ֆինանսական ակտիվների ձեռքբերման նպատակի: Հիմնադրամը չունի որպես «մինչև մարման ժամկետը պահվող» դասակարգված ֆինանսական ակտիվներ: Ստորև ներկայացված է Հիմնադրամի հաշվապահական հաշվառման քաղաքականությունը հաշվեկշռի ամսաթվին առկա յուրաքանչյուր կատեգորիայի համար, բացառությամբ հեջավորման պահանջներին համապատասխանող ֆինանսական ակտիվների:

<u>Դեբիտորական պարտքեր</u>

Դեբիտորական պարտքերը ֆիքսված կամ որոշելի վճարումներով ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվներ են, որոնք գնանշված չեն ակտիվ շուկայում:

Դրանք առաջանում են ծառայությունների մատուցման և գրականության վաճառքի արդյունքում (օրինակ՝ առևտրային դեբիտորական պարտքեր), բայց ներառում են նաև այլ պայմանագրային դրամային ակտիվներ: Այդպիսի ֆինանսական ակտիվները սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով՝ գումարած գործարքի ծախսերը, որոնք ուղղակիորեն վերագրելի են ձեռքբերմանը կամ թողարկմանը, իսկ հետագայում չափվում են ամորտիզացված արժեքով՝ օգտագործելով արդյունավետ տոկոսի մեթոդը՝ հանած արժեզրկման պահուստը:

Արժեզրկման պահուստը ճանաչվում է, երբ առկա է անկողմնակալ վկայություն (օրինակ՝ կողմերն ունեն զգալի ֆինանսական դժվարություններ, չեն կատարում ստանձնած պարտավորությունները կամ ուշացնում են վճարումները) առ այն, որ դեբիտորական պարտքը սահմանված ժամկետներում հնարավոր չի լինի ամբողջությամբ հավաքագրել: Նման պահուստի գումարն ակտիվի զուտ հաշվեկշռային արժեքի և արժեզրկված պարտքերի գծով ապագա դրամական միջոցների հոսքերի ներկա արժեքի տարբերությունն է: Զուտ առևտրային դեբիտորական պարտքերի համար նման պահուստները հաշվառվում են առանձին, և վնասը ճանաչվում է Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ որպես այլ գործառնական ծախս: Եթե հաստատվում է, որ առևտրային դեբիտորական պարտքն անհավաքագրելի է, ակտիվի համախառն հաշվեկշռային արժեքը դուրս է գրվում ասոցիացված պահուստից:

<u>Դրամական միջոցները և դրանց համարժեքներ</u>

Դրամական միջոցները և դրանց համարժեքները ներառում են դրամական միջոցներ դրամարկղում և բանկային հաշիվներում:

3.2. Ֆինանսական պարտավորություններ

Հիմնադրամը ֆինանսական պարտավորությունը ճանաչում է, երբ նա դառնում է գործիքի

պայմանագրային կողմ:
Հիմնադրամը ֆինանսական պարտավորությունը (կամ ֆինանսական պարտավորության մի մասը) ապաճանաչում է, երբ այն մարվում է, այսինքն՝ երբ պայմանագրում նշված պարտականությունը կատարվում է կամ չեղյալ է համարվում կամ ուժը կորցնում է: Ապաճանաչված ֆինանսական պարտավորության հաշվեկշռային արժեքի և վճարված կամ վճարվելիք հատուցման միջև տարբերությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում:

Առևտրական կրեդիտորական պարտքեր

Սկզբնական ճանաչման պահին կրեդիտորական պարտքը չափվում է սկզբնական արժեքով (սկզբնական հաշվում նշված գումարով), բացառությամբ այն դեպքերի, երբ զեղչման ազդեցությունը զգալի է: Այս դեպքում կրեդիտորական պարտքը չափվում է զեղչված արժեքով:

3.3. Հիմնական միջոցներ

Հիմնական միջոցները գնահատվել են սկզբնական (ձեռք բերման, կառուցման) արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կորուստները:

Սկզբնական արժեքը ներառում է հիմնական միջոցների ձեռքբերմանն ուղղակիորեն վերագրելի ծախսումները:

Հետագա ծախսումները կապիտալացվում են միայն այն ժամանակ, երբ դրանք ավելացնում են այն առանձին ակտիվի հետ կապված ապագա տնտեսական օգուտները, որին վերաբերում են:
Հիմնական միջոցների բաղկացուցչի փոխարինման ծախսերը ճանաչվում են միավորի հաշվեկշռային արժեքում, երբ հավանական է, որ Հիմնադրամ կկրեն այդ միավորի հետ կապված ապագա տնտեսական օգուտները և վերջինիս արժեքը հնարավոր կլինի արժանահավատորեն չափել: Փոխարինվող բաղկացուցչի հաշվեկշռային արժեքն ապաճանաչվում է: Հիմնական միջոցների ամենօրյա սպասարկման ծախսումները ճանաչվում են շահույթում կամ վնասում՝ առաջանալուն պես:

Հիմնական միջոցի միավորի օտարումից ստացված շահույթը և վնասը որոշվում են համեմատելով օտարումից ստացվելիք մուտքերը հիմնական միջոցի հաշվեկշռային արժեքի հետ և ճանաչվում են զուտ հիմունքով:

Մաշվածությունը հաշվարկվում է ակտիվի սկզբնական արժեքի հիման վրա՝ հանած դրա մնացորդային արժեքը: Առանձին ակտիվների էական բաղկացուցիչները գնահատվում են, և եթե բաղկացուցչի օգտակար ծառայության ժամկետը տարբերվում է ակտիվի մնացած մասերի օգտակար ծառայության ժամկետից, ապա այդ բաղկացուցչի մաշվածությունը հաշվարկվում է առանձին:

Մաշվածությունը ճանաչվում է համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում արժենվազեցման գծային մեթոդով՝ առանձին ակտիվների օգտակար ծառայության ժամկետների ընթացքում: Մաշվածությունը սկսվում է հաշվարկվել այն պահից, երբ ակտիվը մատչելի է դառնում օգտագործման համար:

Մաշվածության հաշվարկի մեթոդները, օգտակար ծառայության ժամկետները և մնացորդային արժեքները վերանայվում են յուրաքանչյուր ֆինանսական տարվա վերջում և անհրաժեշտության դեպքում՝ ճշգրտվում:

Հիմնական միջոցների համար սահմանվել են հետևյալ օգտակար ծառայության ժամկետները՝

Հիմնական միջոցի տեսակը	Օգտակար ծառայության ժամկետ (տարի)	
	2023	2022
Շենքեր, շինություններ և կառուցվածքներ	50	50
Մեքենասարքավորումներ	7-12	7-12
Արտադրատնտեսական գույք	10	10
Թանգարանային առարկաներ և գրականություն	50	50
Տրանսպորտային միջոցներ	12	12
Համակարգչային տեխնիկա	5-7	5-7
Այլ հիմնական միջոցներ	1-7	1-7

3.4. Ոչ նյութական ակտիվներ

Ոչ նյութական ակտիվները գնահատվել են սկզբնական /ձեռք բերման, ներստեղծման/ արժեքով՝ հանած կուտակված ամորտիզացիա:

Ոչ նյութական ակտիվների ամորտիզացիան հաշվեգրվել է գծային արժենվազեցման մեթոդով՝ հետևյալ օգտակար ծառայության ծամկետով

Ոչ նյութական ակտիվի տեսակը	Օգտակար ծառայության ժամկետ (տարի)	
	2023	2022
Համակարգչային ծրագիր	10	10

3.5. Պաշարներ

Պաշարները սկզբնապես ճանաչվում են ինքնարժեքով, իսկ հետագայում չափվում են ինքնարժեքից և իրացման զուտ արժեքից նվազագույնով: Պաշարների ինքնարժեքը ներառում է ձեռքբերման, փոխարկման և պաշարները ներկայիս գտնվելու վայր և վիճակի բերելու հետ կապված բոլոր այլ ծախսումները:

Համանման բնույթ և կիրառություն ունեցող բոլոր պաշարների ինքնարժեքի որոշման համար կիրառվում է ինքնարժեքի առաջինը մուտք՝ առաջինը ելք (ՖԻՖՕ) բանաձևը:

3.6. Հասույթ

Հասույթը ճանաչվում է գործարքի գնով: Գործարքի գինը այն հատուցման չափն է, որը Հիմնադրամը ակնկալում է ստանալ հաճախորդին խոստացված ապրանքների կամ ծառայությունների նկատմամբ վերահսկողություն փոխանցման դիմաց, բացառությամբ երրորդ անձանց անունից հավաքագրված գումարների:

3.6.1. Ապրանքների վաճառք

Ապրանքների վաճառքից ստացվող հասույթը ճանաչվում է, երբ բավարարված են հետևյալ բոլոր պայմանները

ա) Հիմնադրամը գնորդին է փոխանցում ապրանքների սեփականության հետ կապված ռիսկերի և հատույցների նշանակալի մասը.

բ) Հիմնադրամը չի պահպանում ոչ կառավարման շարունակական մասնակցություն, որը սովորաբար բխում է սեփականության իրավունքից, և ոչ էլ վաճառված ապրանքների նկատմամբ արդյունավետ վերահսկում.

գ) հնարավոր է արժանահավատորեն չափել հասույթի գումարը.

դ) հավանական է, որ գործարքի հետ կապված տնտեսական օգուտները կհոսեն Հիմնադրամ.

ե) գործարքի հետ կապված կատարված կամ կատարվելիք ծախսումները հնարավոր է արժանահավատորեն չափել:

Սովորաբար սեփականության հետ կապված ռիսկերի և հատույցների փոխանցումը գնորդին համընկնում է սեփականության իրավունքի կամ տիրապետման իրավունքի փոխանցման հետ:

Երբ ապրանքները վաճառվում են, դրանց հաշվեկշռային արժեքը պետք է ճանաչվի որպես ծախս այն ժամանակաշրջանում, երբ ճանաչվում է դրանց հետ կապված հասույթը:

3.6.2. Ծառայությունների մատուցում

Երբ ծառայությունների մատուցման գործարքի արդյունքը հնարավոր է արժանահավատորեն գնահատել, գործարքից հասույթը ճանաչվում է հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ գործարքի ավարտվածության աստիճանի հիման վրա: Գործարքի արդյունքը կարելի է արժանահավատորեն գնահատել, եթե բավարարվեն հետևյալ բոլոր պայմանները՝

ա) հնարավոր է արժանահավատորեն չափել հասույթի գումարը.

բ) հավանական է, որ գործարքի հետ կապված տնտեսական օգուտները կհոսեն դեպի Հիմնադրամ.

գ) հնարավոր է արժանահավատորեն չափել հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ գործարքի ավարտվածության աստիճանը.

դ) հնարավոր է արժանահավատորեն չափել գործարքի համար կատարված և գործարքն ավարտելու համար անհրաժեշտ ծախսումները:

3.7. Պահուստներ

Հիմնադրամը ճանաչում է ժամկետի կամ գումարի առումով անորոշ պահուստներ: Որպես պահուստ ճանաչված գումարը պետք է իրենից ներկայացնի հաշվետու ժամանակաշրջանի դրությամբ ներկա պարտավորությունը մարելու համար պահանջվող ծախսումների լավագույն գնահատականը: Զեղչման դրույքը պետք է լինի այն դրույքը՝ առանց հաշվի առնելու հարկման ազդեցությունը, որն արտացոլում է ժամանակի մեջ դրամի արժեքի և այդ պարտավորությանը հատուկ ռիսկերի ընթացիկ շուկայական գնահատումները:

3.8. Եկամուտներ և ծախսեր, շնորհներ

Եկամուտները և ծախսերը հաշվառվել են հաշվեգրման հիմունքով, այսինքն՝ նրանք համարվել են եկամուտ կամ ծախս դրանց տեղի ունենալու պահին անկախ դրանց հետ կապված դրամական միջոցների վճարման կամ ստացման ժամկետից:

Հիմնադրամը պետական շնորհները ճանաչում է հետևյալ կերպ.

ա) շնորհը, որը ստացողի համար չի սահմանում որոշակի ապագա պայմանների կատարում, ճանաչվում է եկամտում, երբ շնորհի գծով մուտքերը ստացման ենթակա են.

բ) շնորհը, որը ստացողի համար սահմանում է որոշակի ապագա պայմանների կատարում, ճանաչվում է եկամտում միայն, երբ պայմանների կատարումը բավարարվում է.

գ) ստացված շնորհները, նախքան հասույթի ճանաչման չափանիշները բավարարելը, ճանաչվում են որպես պարտավորություն:

Ակտիվներին վերաբերող շնորհը նվազեցվում է ակտիվի հաշվեկշռային արժեքը հաշվարկելիս: Շնորհը արտացոլվում է շահույթում կամ վնասում մաշվող (ամորտիզացվող) ակտիվի օգտակար ծառայության ընթացքում՝ նվազեցված մաշվածության ծախսի ձևով:

Շնորհը, որը ստացման ենթակա է դառնում ի հատուցում արդեն կրած ծախսերի կամ վնասների, կամ որի նպատակն է Հիմնադրամին տրամադրել անհետաձգելի ֆինանսական օգնություն՝ առանց դրա հետ կապված հետագա ծախսումների, ճանաչվում են շահույթում կամ վնասում այն հաշվետու ժամանակաշրջանում, երբ այն դառնում է ստացման ենթակա:

3.9. Աշխատակիցների կարճաժամկետ հատուցումներ

Երբ աշխատակիցը հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում Հիմնադրամին մատուցել է ծառայություն, Հիմնադրամը աշխատակիցների կարճաժամկետ հատուցումների չզեղչված գումարը, որոնք ակնկալվում է վճարել այդ ծառայության դիմաց, ճանաչում է

ա) որպես պարտավորություն արդեն վճարված գումարները հանելուց հետո: Եթե արդեն վճարված գումարը գերազանցում է հատուցումների չզեղչված գումարը, Հիմնադրամը ճանաչում է այդ տարբերությունը որպես ակտիվ այն չափով, որով կանխավճարը կհանգեցնի, օրինակ, ապագա վճարումների կրճատման կամ դրամական միջոցների վերադարձի, և

բ) որպես ծախս, բացառությամբ այն դեպքերի, երբ ՓՄԿ-ների ՖՀՄՍ-ով պահանջվում կամ թույլատրվում է հատուցումների գումարը ներառել մեկ այլ ակտիվի արժեքի մեջ (օրինակ, պաշարների, հիմնական միջոցների դեպքում):

Հիմնադրամը փոխհատուցելի բացակայությունների ձևով աշխատակիցների հատուցումների ակնկալվող ծախսումները ճանաչում է

ա) կուտակվող փոխհատուցելի բացակայությունների դեպքում (օրինակ տարեկան արձակուրդը) այն ժամանակ, երբ աշխատակիցները ծառայություն են մատուցում, որն ավելացնում է իրենց իրավունքները ապագա փոխհատուցելի բացակայությունների նկատմամբ, և

բ) չկուտակվող փոխհատուցելի բացակայությունների դեպքում (օրինակ՝ ժամանակավոր անաշխատունակությունը) այն ժամանակ, երբ բացակայությունը տեղի է ունենում:

Հիմնադրամը կուտակվող փոխհատուցելի բացակայությունների գծով ակնկալվող ծախսումները չափում է որպես լրացուցիչ գումար, որը Հիմնադրամը ակնկալում է վճարել որպես հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ կուտակված չօգտագործված իրավունքների արդյունք:

3.10. Արտարժույթով գործարքներ և մնացորդներ

Արտարժույթով գործարքները սկզբնական ճանաչման պահին գրանցվել են հաշվետվական արժույթով (դրամ) գործարքի օրվա դրությամբ փոխանակման փոխարժեքով, այսինքն՝ ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանված հաշվարկային փոխարժեքով:

Հաշվապահական հաշվեկշռի ամսաթվին՝

-արտարժույթով արտահայտված դրամային հոդվածները ներկայացվել (վերահաշվարկվել) են փակման փոխարժեքով,
-արտարժույթով արտահայտված ոչ դրամային հոդվածները ներկայացվել են գործարքի օրվա փոխանակման փոխարժեքով:

Արտարժույթի փոխարկման հետևանքով առաջացած տարբերությունները ճանաչվել են եկամուտ կամ ծախս համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում: Առաջացած շահույթը և վնասը ներկայացվում են զուտ հիմունքով՝ համապարփակ ֆինանասական արդյունքների մասին հաշվետվության մեջ:

Ստորև ներկայացվում են հաշվապահական հաշվեկշռի ամսաթվի դրությամբ փոխանակման (փակման) փոխարժեքները.

Արտարժույթ	31.12.2023	31.12.2022
1 ԱՄՆ դոլար	404.79 ՀՀ դրամ	393.57 ՀՀ դրամ
1 Եվրո	447.90 ՀՀ դրամ	420.06 ՀՀ դրամ
1 Ռուբլի	4.50 ՀՀ դրամ	5.59 ՀՀ դրամ

3.11. Շահութահարկ

Շահութահարկը բաղկացած է ընթացիկ և հետաձգված հարկերից: Ընթացիկ և հետաձգված հարկերը ճանաչվում են զուտ ակտիվներում: Ընթացիկ հարկը տարվա շահութահարկի գծով ակնկալվող վճարման ենթակա հարկի գումարն է, որը հաշվարկվում է կիրառելով հարկերի այն դրույքները, որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ են եղել հաշվետու ամսաթվի դրությաբ և ներառում է նախորդ տարիների վճարման ենթակա հարկերի գծով կատարված ճշգրտումները: Հետաձգված հարկերը հաշվարկվում են օգտագործելով հաշվեկշռային պարտավորության մեթոդը՝ հիմնվելով ֆինանսական հաշվետվությունների նպատակների համար օգտագործվող ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքների և հարկային նպատակների համար օգտագործվող գումարների ժամանակավոր տարբերությունների վրա: Հետաձգված հարկի գումարը չափվում է՝ կիրառելով հարկերի այն դրույքները, որոնք ակնկալվում է, որ կկիրառվեն ժամանակավոր տարբերությունների նկատմամբ վերջիններս հակադարձելիս՝ հիմք ընդունելով այն օրենքների դրույթները, որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ են եղել հաշվետու ամսաթվի դրությամբ:

Հետաձգված հարկային ակտիվները և հետաձգված հարկային պարտավորությունները հաշվանցվում են, եթե հիմնադրամն ունի ընթացիկ հարկային ակտիվներն ընթացիկ հարկային պարտավորությունների դիմաց հաշվանցելու իրավաբանորեն ամրագրված իրավունք և հետաձգված հարկային ակտիվներն ու հետաձգված հարկային պարտավորությունները վերաբերում են շահութահարկին, որը գանձվում է նույն հարկային մարմնի կողմից նույն հարկատուից կամ տարբեր հարկատուներից, սակայն հիմնադրամը մտադիր է հարկային պարտավորությունները մարել և հարկային ակտիվներն իրացնել զուտ հիմունքով կամ միաժամանակ իրացնել հարկային ակտիվներն ու մարել հարկային պարտավորությունները:

Հետաձգված հարկային ակտիվը ճանաչվում է չօգտագործված հարկային վնասների, հարկային արտոնությունների և նվազեցվող ժամանակավոր տարբերությունների գծով, այն չափով, որքանով հավանական է, որ առկա կլինի հարկվող շահույթ, որի դիմաց դրանք կարող են օգտագործվել:

Հետաձգված հարկային ակտիվները վերանայվում են յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ և նվազեցվում են այնքանով, որքանով հավանական չէ, որ հարկային օգուտը

կիրացվի:

Հաշվի առնելով Հիմնադրամի գործունեության նախորդ տարիների արդյունքները, Հիմնադրամի ղեկավարությունը չի ակնկալում ապագայում հարկվող շահույթի այն չափով գոյացում, որի դիմաց կարող են օգտագործվել հետաձգված հարկի գումարները, այդ իսկ պատճառով աշխատակիցների կուտակված արձակուրդային վճարների պահուստի գծով առաջացող հետաձգված հարկային ակտիվները չեն ձևակերպվել:

4. Հիմնական միջոցներ

	Հողամասեր	Շենքեր, շինություններ և կառուցվածքներ	Մեքենաներ և սարքավորում-ներ	Համակարգ-չային տեխնիկա	Տրանսպոր-տային միջոցներ	Տնտեսական գույք, գործիքներ
Սկզբնական արժեք						
Առ 01.01.2023թ.	129,212,700	2,177,300	252,924	23,941	8,670	91,505
Գնում	-	-	-	1,060	-	76
Օտարում	-	-	-	-	-	-
Առ 31.12. 2023թ.	129,212,700	2,177,300	252,924	25,001	8,670	91,581
Մաշվածություն						
Առ 01.01. 2023թ.	-	(130,755)	(133,815)	(16,913)	(7,711)	(50,209)
Հաշվարկ	-	(43,546)	(28,725)	(2,370)	(719)	(8,466)
Օտարում	-	-	-	-	-	-
Առ 31.12. 2023թ.	-	(174,301)	(162,541)	(19,283)	(8,430)	(58,675)
Հաշվեկշռային արժեք						
Առ 31.12.2022թ.	129,212,700	2,046,545	119,109	7,028	959	41,297
Առ 31.12.2023թ.	129,212,700	2,002,999	90,384	5,718	240	32,906

Հաշվետու տարում հաշվարկվել է 85,548 հազար, իսկ դրան նախորդող տարում՝ 84,266 հազար դրամի
դրությամբ հիմնադրամն ունի 20,046 հազար դրամ սկզբնական արժեքով հիմնական միջոցներ (նախորդ տա
դրամ), որոնց հաշվեկշռային արժեքը 0 է:
Հողամասերը, շենքերը, շինությունները և այլ կառույցները հանդիսանում են պետական սեփականությու
օգտագործման իրավունքով տրամադրվել են Հիմնադրամին (ծանոթագրություն 7):

5. Ոչ նյութական ակտիվներ

	Համակարգչային ծրագրեր	Այլ ոչ նյութական ակտիվներ	Ընդամենը
Սկզբնական արժեք			
Առ 01.01.2023թ.	461	-	461
Գնում	250	4,968	5,218
Օտարում	-	-	-
Առ 31.12. 2023թ.	711	4,968	5,679
Ամորտիզացիա			
Առ 01.01.2023թ.	(354)	-	(354)
Հաշվարկ	(46)	-	(46)
Օտարում	-	-	-
Առ 31.12.2023թ.	(400)	-	(400)
Հաշվեկշռային արժեք			
Առ 31.12.2022թ.	107	-	107
Առ 31.12.2023թ.	311	4,968	5,279

6. Պաշարներ

	31.12.2023	31.12.2022
Ապրանքներ պահեստում	28,348	27,545
Տնտեսական, գրասենյակային և այլ նյութեր	1,385	1,837
Շինանյութեր	1,257	1,252
Վառելիք	201	249
Ընդամենը	**31,191**	**30,883**

7. Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

	31.12.2023	31.12.2022
Դրամական միջոցներ դրամարկղում	5,286	5,894
Դրամական միջոցներ բանկային հաշվում ՀՀ դրամով	59,239	49,278
Դրամական միջոցներ բանկային հաշվում արտարժույթով	3,591	4,874
Ընդամենը	**68,116**	**60,046**

8. Ակտիվներին վերաբերող շնորհներ

	2023	2022
Մնացորդը տարեսկզբին	**131,642,814**	**131,727,088**
Ստացված շնորհներ	18,983	40
Եկամուտ ճանաչված շնորհներ	(85,549)	(84,314)
Մնացորդը տարեվերջին	**131,576,248**	**131,642,814**

Ստացված շնորհների գծով կցված և չկատարված պայմաններ և այլ պայմանականություններ չկան: Շնորհը եկամուտ է ճանաչվել մաշվող ակտիվի օգտակար ծառայության ընթացքում՝ հաշվարկված մաշվածության ծախսի չափով:

9. Առևտրական և այլ կրեդիտորական պարտքեր

	31.12.2023	31.12.2022
Կրեդիտորական պարտքեր գնումների գծով	11,526	3,477
Կրեդիտորական պարտքեր բյուջեին	8,360	6,838
Այլ կրեդիտորական պարտքեր	254	**281**
Ընդամենը	**20,140**	**10,596**

10. Եկամուտներին վերաբերող շնորհներ

	2023	2022
Մնացորդը տարեսկզբին	**44,019**	5,576
Ստացված շնորհներ	287,062	282,638
Եկամուտ ճանաչված շնորհներ	(300,947)	(242,232)
Շնորհներից հաշվարկված ԱԱՀ	-	(84)
Հետ վերադարձված շնորհներ	(4,600)	(1,879)
Մնացորդը տարեվերջին	**25,534**	**44,019**

Հաշվետու ամսաթվի դրությամբ ստացված շնորհների գծով առկա են կցված 25,534 հազար դրամի կցված և դեռևս չկատարված պայմաններ, որոնք պետք է կատարվեն 2024թ ընթացքում:

Եկամուտներին վերաբերող շնորհներն իրենցից ներկայացնում են ֆիզիկական և իրավաբանական անձանց Հիմնադրամին կատարված դրամական նվիրատվությունները և նվիրաբերությունները (շնորհները):

Ստորև ներկայացվում են հաշվետու և համադրելի տարում Հիմնադրամի կողմից ստացված դրամական նվիրատվությունները և նվիրաբերությունները (շնորհները), որոնք վերաբերվում են և ակտիվներին, և եկամուտներին.

Նվիրատուներ (շնորհատուներ)	2023	2022
ՀՀ Գիտության կոմիտե (Ազգային արժեք ներկայացնող գիտական օբյեկտի պահպանման ծրագիր)	224,219	213,232
ՀՀ Գիտության կոմիտե (Թեմատիկ գիտական ծրագրեր, կրթաթոշակներ և այլն)	54,598	40,764
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն	10,800	18,989
Գանձանակ մուտքագրված նվիրաբերություններ	2,838	2,965
Այլ նվիրատուներ	13,532	6,688
Ընդամենը դրամական մուտքեր շնորհներից	**305,988**	**282,638**

11. Պահուստներ

Այս հոդվածում ներկայացված են աշխատակիցների կուտակված արձակուրդների գծով կարճաժամկետ հատուցումները: Պահուստավորումը կատարվում է յուրաքանչյուր տարեվերջի դրությամբ՝ տարեսկզբի մնացորդի համեմատությամբ աճի կամ նվազման գումարով: Ակնկալվում է, որ դրամական արտահոսքերը տեղի կունենան հաջորդ տարվա ընթացքում՝

հերթական ամենամյա արձակուրդերն օգտագործելիս: Ձեղչման ազդեղությունը համարվել է ոչ էական և պահուստը չափվել է գնահատված դրամական արտահոսքերի անվանական գումարով:

12. Եկամուտ ճանաչված շնորհներ

	2023	2022
Եկամուտներին վերաբերող շնորհների գծով եկամուտներ	300,947	242,232
Ակտիվներին վերաբերող շնորհների գծով եկամուտներ	85,549	84,313
Ընդամենը	**386,496**	**326,545**

13. Հասույթ

	2023	2022
Գրական նյութերի և հուշանվերների վաճառքից հասույթ	25,836	18,036
Շրջայցի (մուտքավճարի) տոմսերի վաճառքից հասույթ	16,179	8,952
Այլ ծառայությունների մատուցումից հասույթ	203	401
Ընդամենը	**42,218**	**27,389**

14. Աշխատակիցներին հատուցումների գծով ծախսեր

	2023	2022
Վարչական անձնակազմի աշխատանքի վճարման ծախսեր	46,112	43,867
Գիտական և այլ անձնակազմի աշխատանքի վճարման ծախսեր	175,788	156,902
Քաղիրավական պայմանագրերի ներքո մատուցված գիտական աշխատանքների գծով ծախսեր	38,293	11,056
Ասպիրանտի կրթաթոշակի գծով ծախսեր	1,170	1,560
Կուտակվող արձակուրդների գծով լրացուցիչ ծախս (ծախսի նվազեցում)	(856)	(946)
Ընդամենը	**260,507**	**212,439**

15. Այլ ծախսեր

	2023	2022
Հիմնադրամի շենքի և հուշահամալիրի նորոգման, նախագծային-նախահաշվային աշխատանքներ	10,446	2,535
Անհատույց տրված ակտիվների գծով ծախս	3,026	1,622
Բանկային ծառայությունների գծով ծախսեր	805	523
Ծախսեր տույժերից	16	236
Այլ ծախսեր	3,588	4,304
Ընդամենը	**17,881**	**9,220**

16. Կապակցված կողմերի հետ գործարքներ

Հիմնադրամի կապակցված կողմերն են հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի անդամները, դոնոր կազմակերպությունները և հիմնական ղեկավար անձնակազմը:

Գործարքներ ղեկավարության հետ

- *Ղեկավարության վարձատրություն*

Հիմնադրամի հիմնական ղեկավար անձնակազմը ստացել է հետևյալ վարձատրությունը (ներառյալ հարկերը).

	2023	2022
Աշխատավարձ և դրան հավասարեցված վճարումներ	20,368	20,075
Քաղիրավական պայմանագրերի գծով վարձատրություն	7,037	1,851

17. Պայմանական պարտավորություններ

Ֆինանսական երաշխիքներ և ակրեդիտիվներ

Հիմնադրամը 31.12.2023թ. և 31.12.2022թ. դրությամբ ֆինանսական երաշխիքներ և ակրեդիտիվներ չի ունեցել:

Ապահովագրություն

Հայաստանի Հանրապետությունում ապահովագրական համակարգը զարգացման փուլում է, և ապահովագրության շատ տեսակներ, որոնք լայնորեն տարածված են մյուս երկրներում, դեռ չեն կիրառվում Հայաստանում: Հիմնադրամի գույքը ապահովագրված չէ: Այն ապահովագրված չէ գործունեության ընդհատման և երրորդ կողմերի նկատմամբ պարտավորությունների հանդեպ, որոնք կարող են առաջանալ գույքին կամ շրջակա միջավայրին վնաս հասցնելուց առաջացած Հիմնադրամի տարածքում տեղի ունեցած պատահարներից կամ նրա գործունեությունից հասցված վնասից: Քանի դեռ Հիմնադրամը համապատասխան ձևով ապահովագրված չէ, գոյություն ունի ռիսկ, որ որոշակի ակտիվների կորուստը կամ ոչնչացումը կարող է անբարենպաստ էական ազդեցություն ունենալ Հիմնադրամի գործունեության և ֆինանսական վիճակի վրա:

Իրավական պարտավորություններ

Հիմնադրամի ղեկավարությունը տեղյակ չէ Հիմնադրամի դեմ հարուցված որևէ փաստացի, անավարտ կամ սպառնացող էական հայցերի մասին:

Պայմանական հարկային պարտավորություններ

Հայաստանի Հանրապետությունում հարկային համակարգը համեմատաբար նոր է և հատկանշական է հաճախակի փոփոխվող օրենսդրությամբ: Վերջինս հաճախ հստակ չէ, հակասական է և պահանջում է մեկնաբանություններ: Շատ դեպքերում այս կամ այն հարցում տարբեր հարկային և այլ իրավասու մարմիններ ունեն տարբեր մեկնաբանություններ: Մասնավորապես՝ ՀՀ հարկային օրենսդրությամբ հստակ չէ ստացված պետական շնորհները ավելացված արժեքով հարկվող օբյեկտ դիտելու և ավելացված արժեքի հարկ հաշվարկելու հարցը և կարող է մեկնաբանվել տարբեր կերպ: Հարկային խնդիրներն ուսումնասիրվում են հարկային մարմինների կողմից, որոնք օրենսդրությամբ լիազորված են հաշվարկել տուգանքներ և տույժեր:

Այս փաստերը Հայաստանի Հանրապետությունում կարող են այլ երկրների համեմատությամբ էական հարկային ռիսկ առաջացնել: Ղեկավարությունը գտնում է, որ Հիմնադրամը չունի լրացուցիչ հարկային պարտավորություններ և պահուստ չի ձևավորել լրացուցիչ հարկային պարտավորությունների գծով:

18. Հաշվետու ժամանակաշրջանից հետո տեղի ունեցող դեպքեր

Հաշվետու ամսաթվից հետո մինչև վավերացման ամսաթիվը ընկած ժամանակահատվածում ճշգրտող դեպքեր կամ էական չճշգրտող դեպքեր տեղի չեն ունեցել:

19. Ֆինանսական հաշվետվությունների հաստատում

Սույն ֆինանսական հաշվետվությունները հաստատվել և ստորագրվել են 2024թ հունիսի 14-ին:

Տնօրեն
Էդիտա Գրոյան

Գլխավոր հաշվապահ
Սաթենիկ Ղարագյոզյան

Signer: ՀՀ ՊԵԿ
Date: 12.08.2024 14:52